

յաւելաւ եւ պակասաւ: Եւ դեռ եւս աղաղակէին ի վայրն, եւ յորժամ լուան զայս Հոռոմք, մի ի վերայ միոյ անկեալք զփախուստն աճապարէին, եւ միահեծան եղեալ ի դրանէն, ոչ կարէին քակտիլ: Ի դուրս ելանէն, և ձիանք աղաներացն զարհուրեալք խրխընջային ի տեղիս իւրեանց եւ զաղաղակ բառնային. եւ հրաման եղեւ Ե Զ ոգի զան խօսք հասկացող ի նոցանէ, եւ ի վայր փախան եւ ասացին թէ Զարկէ՛ք: Մուշգուր աղան եւ չառուչ պաշին երկայն փայտիւ վերացուցանէին զթևս իւրեանց փայտոյն, զերեսունն եւ զքառասունն հարկանէին, պտուտ տային ի մէջ բակին եւ ի դուրս ելնել ոչ կարէին. եւ այլք ի ծակէ ծակ մտանէին եւ յախօռս¹⁾ ձիոցն, եւ ձիքն զարհուրէին, մի ի վերայ միոյ անկեալք լինէին. այլ փայտն ելանէր եւ իջանէր ի վերայ նոցա. եւ որք հազիւ քակտեալ ի փախուստ, և անցորդք ճանապարհին յայլ ազգաց ոչ գիտելով զիրոն, զնոսա տեսեալ՝ նոքա և փախչէին եւ որք ի հաբեղայից նոցա ընդ պատրիզին՝ ընդ թևս Հայոց մտանէին, մինչև սէնէտ և գիր կարգացուաւ և ի բաց վարեցան նոքա: Եւ եկաք ի Սուրբ Նիկողոս, և յետ աւուրց գրել պիտէր վէզիրն զէմրս՝ թէ որ կերպիւ խնդրեցաք:

Եւ յետ պահու ժողովեցան ամբոյսս մեր և եկին առ Եղիազար թէ Դու գիտե՞ս որ Մուշկեցին կ'երթայ. թէ երթալ չունի՝ երթամք ի Պալատ, ըմբռնեմք և տանիմք ի վէզիրն: Եւ յետ պահու զայ յայն բան իմանձին մտանել առ Եղիազար: Սկսին ժողովուրդն ի վերայ նորա թէ Դու ես որ չես թողուր երթալ զՄուշկեցին. այս քաղաքս քեզ է յանձնած, մի թէ ի տիւա՞նն լցուինք քեզ համար. եւ այլ բազում նախատինս: Եւ նա պատասխանէ թէ Մարգի՛ք, լռե-

1) յախորս.